ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ռուսաստանի Դաշնություն/Մոսկվա/20.12.2018թ.

- **Նպատակը**

Մասնակցել Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը:

- **Քննարկված թեմաները**

Հանդիպմանը ներկայացին և քննարկեցինվեն հետևյալ թեմաները.

1. ԵԱՏՄ ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների հետ աշխատանքային հանդիպումների արդյունքների հիման վրա որոշումների իրականացման մասին:

2. Սահմանամերձ տարածքների ինտեգրման գործընթացների մշտադիտարկման նպատակով սսահմանամերձ համագործակցության զարգացումը բնութագրող վիճակագրական ցուցանիշների ցանկի ձևավորման վերաբերյալ:

3. ԵԱՏՄ վիճակագրության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման վերաբերյալ:

4. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ հրապարակվող վիճակագրական տվյալների ճշգրտման կանոնակարգերի մշակման վերաբերյալ:

5. Ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության մեթոդաբանության արդիականացված դրույթների իրականացման և այդ ոլորտում ԵԱՏՄ Կոլեգիայի մեթոդաբանական առաջարկությունների վերաբերյալ:

- **Արդյունքները**

Մասնակցությունը հանդիպմանը հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարներին՝ ծանոթանալու Եվրասիական տնտեսական միության ազգային վիճակագրական ծառայությունների վերջին զարգացումներին, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու մեթոդաբանական հարցերն ու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

Մասնավորապես ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտին տրամադրվեցին աջակցող 3 փաստաթուղթ՝ «Հայաստանի ազգային հաշիվների վերանայման քաղաքականություն և վերանայման ժամանակացույց», «ՀՆԱ վերանայման ժամանակացույցը 2018թ.-ին» և «Պաշտոնական վիճակագրության վստահության պակասի օբյեկտիվ պատճառները» փաստաթղթերը, հատկապես ներկաների ուշադրությունը հրավիրելով վերջին փաստաթղթի «Վիճակագրության յուրաժամանակայնության, որակի, ամբողջականության և օգտավետության համաձայնեցվածության նկարագիրը» խորագրով աղյուսակի վրա, ինչը ցուցանիշների վերանայման համար միասնական փաստաթուղթ մշակելու հիմք կարող է հանդիսանալ: Ներկաները համաձայնեցին:

Բելառուսի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ, առ այն, որ անհրաժեշտ է փոքր և միջին ձեռնարկությունների վիճակագրության համար ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտը մշակի միասնական չափորոշիչներ, քանի որ նման միջազգային չափորոշիչներ առկա չեն, հայկական կողմը տեղեկացրեց, որ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրամիության կողմից դեռևս 2008թ.-ին նման չափանիշներ մշակվել են, որոնք

կատարելագործվել են 2015թ.-ին և 2010թ.-ին Հայաստանը այդ չափանիշներն ամրագրող օրենք է ընդունել ու այդ չափանիշներով ՀՀ ՎԿ-ն հրապարակել է «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» (2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ) վիճակագրական տեղեկագիրը, ինչով պայմանավորված առաջարկվեց ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտին իր մշակումներում հիմք ընդունել այդ չափանիշները:

Ներկաների ուշադրությունը մեկ անգամ ևս հրավիրվեց այն հանգամանքի վրա, որ Հայաստանը չունի ուղղակի սահմաններ ԵԱՏՄ այլ անդամ-երկրների հետ, հետևաբար միջսահմանային վիճակագրությունը Հայաստանի դեպքում խնդրահարույց է:

Խնդրահարույց է նաև ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտի մշակած նախնական նախագծային այն պատկերացումները, համաձայն որոնց վիճակագրական ծառայությունների առանձին ստորաբաժանումները «Անձնական գրասենյակի» սկզբունքով համապատասխան վիճակագրությունը պետք է ներկայացնեն ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտին: Հայկական կողմը նշեց, որ նման մոտեցումը կոնֆլիկտ կառաջացնի ՄԱԿ-ի կողմից սահմանված ամբողջականության և տարածման սկզբունքների միջև: Սույն որոշումը պաշտպանվեց Ռուսաստանի Դաշնության կողմից և առաջարկվեց այդ հանգամանքը հաշվի առնել հարցի հետագա լրամշակումներում:

ԵԱՏՀ Մակրոտնտեսական և ինտեգրման հիմնական ուղղությունների կոլեգիայի անդամ, նախարար՝ Տ. Վալովայան առաջարկեց ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտին միաժամանակ քննարկել անդամ երկրների համար համատեղ թեմատիկ սեմինարներ կազմակերպելու հարցը 2019թ.-ին, հատկապես ՓՄՁ վիճակագրության և կայուն զարգացման նպատակների վիճակագրության ոլորտում Հայաստանի առաջավոր փորձը ներկայացնելու նպատակով: Հայկական կողմն էլ առաջարկեց, որ մյուս երկրները ևս ներգրավվեն նման գործընթացներում, ներկայացնելով, տարբեր ոլորտներում իրենց մոտ կուտակված առաջավոր փորձերը:

Ռազմավարական ուղղություններին վերաբերող հարցերի քննարկումների ժամանակ հայկական կողմը ուշադրություն հրավիրեց ԵԱՏՄ վիճակագրական դեպարտամենտի կարգավիճակի հարցին, ընդգծելով, որ վերջինս ընդամենը ստորաբաժանում է առանց լուրջ մանդատի, զուգահեռներ տանելով ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) հետ, որոնք առանձին կառուցվածքային միավորներ են՝ օժտված միջազգային կազմակերպության կարգավիճակով և մանդատներով և որ

իրենց գործունեությունը խարսխված է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար ու Եվրոպական փորձառության օրենսգրքով սահմանված սկզբունքների վրա:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի
նախագահ Ս. Մնացականյան